<u>**Ձև N 5.5.1**</u>

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 225

*ներթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքը (Գանձաքար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքը (Գանձաքար բնակավայր)<br><br>11-021-0635-0014 կադաստրային ծածկագրով 0.3 հա մակերեսով հողամասից 0.224 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 11-021-0635-0014 կադաստրային ծածկագրով 0.3 հա մակերեսով հողամասից 0.224 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր | Համաձայն Տավուշ-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի . |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող* | | |
| | | **Դ. Գրիգորյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «1» «հունիսի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):
4. Իջևան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Գանձաքար բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի (Գանձաքար բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: